

Պատասխան խոսք
պատ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Ա. Դիլոյանի
ընդդիմախոսությանը

Հատված պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան
հայցելու համար Արմեն Այվազյանի՝ «Հայոց եկեղեցին XVIII դարի հայ
ազատագրական շարժման քառուղիներում» ատենախոսության
հրապարակային պաշտպանության առիթով ՀՀ ԳԱԱ Պատմության
ինստիտուտում գործող 004 մասնագիտական խորհրդում
2003թ. դեկտեմբերի 9-ին կայացած նիստի սղագրությունից

Նախ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել պրոֆ. Վալտեր Դիլոյանին՝ ատենախոսությունս ուշադիր կարդալու և արժեքավոր դիտարկումներ անելու համար: Հատկապես երախտապարտ եմ ու զգացված, որ պրոֆ. Դիլոյանը գրել է իր ընդդիմախոսությունը ոտքի վնասվածքից դեռևս լիովին չապաքինված, փաստորեն, անկողնային վիճակում:

Այժմ անդրադառնանք ընդդիմախոսության մեջ առաջադրված մի շարք դրույթների:

1. Հարգարժան ընդդիմախոսը կարծում է, որ Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրությանը՝ Բջնիի, Հաղբատի, Ս. Թադեոսի և Տաթևի արքեպիսկոպոսների հավանություն տալու կանոնը չէր կարող ընդունված լինել 1708 թ., քանի որ Աղեքսանդր Ջուղայեցու 1708 թ. փետրվարի 20-ի շրջաբերականում ընդգծվում է ընտրության հարցում բոլոր թեմերի և վիճակների ու հատկապես Կ. Պոլսի և Նոր Ջուղայի հայության մասնակցության անհրաժեշտությունը¹:

Ինչպես տեսնում ենք, այստեղ խոսքը վերաբերում է ընտրության ընդհանուր պարտադիր կանոններին, որոնք, բացառությամբ Կ. Պոլսից ևս

¹ Համառոտաբար կրկնեմ այդ հատվածը, որն, ի դեպ, նախապես (եջ 175-ում) մեջբերված էր մեր ատենախոսության մեջ. «Քարց սալահի եւ մանսարի եւ վկայական թղթոյ չորեքծագեան կողմանէ, որք թեմ եւ վիճակ եւն եւ ժողովուրդ Սուրբ Աթոռոյս..., յաւետ եւս եւ մայրաքաղաքաց եւ արքայանիստ գահից, այսինքն՝ Իսպահանու եւ Իստամպուլու, եւ առանց մեծի ժողովոյ ի Սուրբ Աթոռս՝ մի՛ ձեռնադրեսցեն զոր ի պատիւ կաթողիկոսութեան»:

հաստատում ստանալու նոր կետի, կիրառվել են մինչև 1708 թվականը և դրանից հետո: Մինչդեռ չորս արքեպիսկոպոսներին տրված իրավունքները վերաբերում էին զուտ եկեղեցական ներքին կանոնադրությանը. նրանք պետք է *նախնական հավանության* արժանացնեին կաթողիկոսացուի թեկնածությունը, անպայման ներկա գտնվեին ձեռնադրության արարողությանը և անձամբ կատարեին կաթողիկոսի օծումը: Այս կանոնը երբեք չի նշանակել, որ ընտրությունը կատարել և հաստատել են այդ չորս արքեպիսկոպոսները:

Հետևաբար, Աղեքսանդր կաթողիկոսի շրջաբերականում նշված դրույթների և չորս արքեպիսկոպոսներին վերաբերող կանոնի միջև որևէ հակասություն (ինչպես փորձում է ներկայացնել ընդդիմախոսը) գոյություն չունի:

2. Ատենախոսության մեջ առաջադրել էինք մի բոլորովին նոր, երբևէ հարցադրման իսկ չարժանացած խնդիր՝ ճշտել, թե ե՞րբ է հիմնվել Ս. Էջմիածնի ծայրագույն նվիրակի պաշտոնը: Այս ուղղությամբ մեր կատարած երկարատև պրպտումներն ամենաառաջին ծայրագույն նվիրակ նկատել էին Ղազար Զահկեցուն, որը, ինչպես ճշտել ենք, այդ պաշտոնով Կ. Պոլիս էր ժամանել 1730 թ. վերջին-1731 թ. սկզբին: Ուրախ եմ, որ պրոֆ. Դիլոյանը կարողացել է եզակի մի փաստաթղթում գտնել մեկ ուրիշ գործչի, որը տաս տարով ավելի վաղ է եղել այդ պաշտոնում: Պետք է ասել, սակայն, որ մեզ ծանոթ երկու այլ հիշատակարաններում այդ գործիչը՝ Պետրոս Աստապատցին հիշատակված է առանց «ծայրագույն» բառի, որպես սոսկ «նվիրակ»: Այսպես՝ Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու տպարանում 1721 թ. հրատարակված Առաքել Սյունեցու «Աղանագրքում» նա նշվում է իբրև «նվիրակ սրբոյ գահին Էջմիածնի ի Կոստանդնուպոլիս, Պետրոս Գերապատիւ Եպիսկոպոսն աստապատցի»²: Նույն տպարանում 1729 թ. լույս ընծայված Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ում նա դարձյալ նշվում է իբրև «նվիրակ», և ոչ ծայրագույն նվիրակ՝ «...ի թուին հայոց ՌՃՀ (=1721) եկն նուիրակ սրբոյ Էջմիածնի ի Կոստանդնուպոլիս՝ գիտնական և բարեկրօն մեծ վարդապետն Պետրոս

² Տե՛ս Ոսկանյան, Ն. Ա., Ք. Ա. Կորկոտյան, Ա. Մ. Սավալյան. Հայ գիրքը 1512-1800 թթ.: Հայ հնատիպ գրքի մատենագիտություն: Առաջաբանը՝ Ն. Ոսկանյանի, խմբագրությամբ՝ Ռ. Ա. Իշխանյանի, Երևան, 1988, էջ 243ա:

աստ[ուա]ծաբան աստապատցին»³: Այն, որ Պետրոս Աստապատցուն անվանում են «ծայրագույն նվիրակ» առայժմ մեզ հայտնի ընդամենը մեկ վավերագրում, որը գրված է 1723 թ., իսկ 1721 և 1729 թթ. նրան կոչում էին լոկ «նվիրակ», կարող է նշանակել, որ այդ պաշտոնը դեռ նոր էր ձևավորվում և նրա բովանդակությունը տակավին քիչ էր տարբերվում նախկինում եղածից: Ուստի, կարծում ենք, այդ պաշտոնն իրական կշիռ ձեռք բերեց Ղազար Ջահկեցու ծայրագույն նվիրակ նշանակումով:

Ինչևհետե, շնորհակալ են պրոֆ. Դիլոյանին այս փաստն ի հայտ բերելու և դրանով իսկ մեր հետազոտությունը զարգացնելու համար: Ի դեպ, այսպիսի խնդիրների լուծմանը մեծապես կնպաստի հայ մատենագրության թվայնացումը և այդ թվայնացման արդյունքների մատչելիության ապահովումը բոլոր հայագետների համար, որից հետո համակարգչի միջոցով նմանատիպ հարցերը հնարավոր կլինի լուծել ընդամենը մեկ-երկու րոպեում, և՛ ոչ տարիներ շարունակ այս կամ այն բառն սկզբնաղբյուրների մեջ փնտրելով:

Սակայն հարգարժան ընդդիմախոսն այս շտկումից հեռու գնացող եզրակացություններ է անում, փորձելով ժխտել Աբրահամ Խոշաբեցի կաթողիկոսի և Կոլոտ պատրիարքի միջև 1730-1734 թթ. լարված հարաբերությունների առկայությունը, որը մեզ հայտնի է բոլորովին այլ աղբյուրներից, մասնավորապես Գրիգոր Շղթայակրի նամակներից (տե՛ս ատենախոսության էջ 80-82):

3. Մեզ քննադատելու ընթացքում ընդդիմախոսը գրում է. «Չպետք է մոռանալ, որ Հովհաննես Կոլոտի այսպես կոչված հաշտարար ընթացքը հայ կաթողիկոսների նկատմամբ ոչ թե հակվածություն էր դեպի գիջողականություն, այլ ձգտում փրկելու նրանց խստագույնս հետապնդող օսմանյան կառավարության ճնշամիջոցներից, մի բան, որ շատերը մինչև այսօր էլ չեն ուզում հասկանալ: Չուզենալով հասկանալ այդ, մենք կամա թե ականա աղավաղում ենք պատմական իրականությունը»:

Սակայն ու՞մ է ուղղված այս անհարկի խրատը, ովքե՞ր են այդ չճշտված «շատերը», որոնք «մինչև այսօր էլ չեն ուզում հասկանալ» Հովհաննես Կոլոտի

³ Նույն տեղում, էջ 286բ-287ա:

վարած քաղաքականությունը և «աղավաղում են պատմական իրականությունը»: Եթե այդ անհայտ «շատերի» մեջ մեր ընդդիմախոսը նկատի ունի նաև մեզ (իսկ տպավորությունը միանշանակ այդպիսին է), ապա այստեղ հակասություն կա ընդդիմախոսության նախորդ էջերի հետ, որտեղ միանգամայն հստակ ուրվագծվել է այս հարցում մեր ունեցած դիրքորոշումը, ահավասիկ մի մեջբերում պրն. Դիլոյանի խոսքից՝ «Հայ կաթոլիկների նկատմամբ որոշ զիջողական քաղաքականությունը, ատենախոսի իրավացի հավաստմամբ, ամենևին չէր երերում նրանց (իմա՝ Հովհաննես Կոլոտի և Կարապետ կաթողիկոսի - Ա. Ա.) հավատարմությունը հայ եկեղեցու վարդապետությանը»:

Ավելի՛ն, մեր ատենախոսությունն ունի մի առանցքային հատուկ ենթագլուխ, որը հենց այդպես էլ վերնագրված է՝ «Կոլոտ պատրիարքի և Կարապետ կաթողիկոսի՝ կաթոլիկների հանդեպ որդեգրած հաշտարար դիրքորոշման քաղաքական դրոպապատճառները» (էջ 65-67): Այդ ենթագլխում առաջին անգամ հիմնավորված է, որ Արցախում և Սյունիքում կազմակերպված հզոր ինքնապաշտպանությունը, որը մեծ կորուստներ էր պատճառում օսմանյան բանակներին, անմիջական ազդեցություն ունեցավ Կ. Պոլսում կաթոլիկների նկատմամբ Կոլոտ պատրիարքի և Կարապետ կաթողիկոսի որդեգրած քաղաքականության վրա: Այս հետազոտության արդյունքները մանրամասն ներկայացված են նաև ատենախոսության սեղմագրում (էջ 16-18), ուստի զերծ ենք մնում դրանք վերաշարադրելուց: Սակայն զարմանալի է, որ մեր հարգարժան ընդդիմախոսը որևէ կերպ այդ ենթագլխի բովանդակությանը չանդրադառնալով, մեզ անտեղի և անհիմն դիտողություններ է անում:

4. 1722 թ. Լիմ անապատում տեղի ունեցած ժողովի մասին հայտնի հիշատակարանը պրոֆ. Դիլոյանը անվանում է «այսպես կոչված» և ասում, որ «նրա իսկությունը մեզ թեական է թվում»: Սակայն, ի՞նչ հիման վրա է նա կասկածելի համարում այս հիշատակարանի իսկությունը՝ ընդդիմախոսը չի ասում, եթե չհաշվենք այն...

Վ. Դիլոյանը դահլիճից ընդհատում է, բացականչելով. «Ինձանից առաջ ուրիշներն էլ են ասել»:

Ա. Այվազյանը պատասխանում է. «Հիմա ես ձե՛զ եմ պատասխանում»:
Շարունակում է ընթերցել:

...եթե չհաշվենք այն, որ գրիչը խոսում է 1722 թ. գարնանը Լիմում գումարված ժողովի մասին, իսկ ընդդիմախոսի կարծիքով այդ ժողովը գարնանը լինել չէր կարող: Ընդամենը մեկ փաստարկի վրա հենվելով, առանց լուրջ վերլուծության՝ ընդդիմախոսը փորձում է անհավաստի հռչակել բացառիկ կարևորություն ներկայացնող մի փաստաթուղթ: Լիմ անապատի հիշատակարանի նկատմամբ նման մոտեցման դրսևորումը պատմագիտական մեթոդաբանության խախտում է: Սակայն իրականում այդ խախտումը շատ ավելի լուրջ է, քանի որ ընդդիմախոսն անտեսում ու շրջանցում է հիշատակարանի վերլուծությանը նվիրված առանձին մի հետազոտություն: Բանն այն է, որ 2001 թ. մենք *առանձին հոդվածով* մանրամասն քննել ենք այս հիշատակարանի տվյալները և հանգել այն եզրակացության, որ հիշատակարանը միանգամայն արժանահավատ փաստաթուղթ է, որի և՛ բովանդակությունը, և՛ լեզուն, և՛ ոճը համապատասխանում են իր ժամանակի իրողություններին: Այդ հոդվածում, որը լույս է տեսել անգլերենով երկու անգամ՝ հեղինակավոր տարբեր հրատարակություններում⁴, հատուկ պարզաբանված է, որ Լիմ անապատում 1722 թ. գարնանը գաղտնի ժողով անցկացնելը նշանակում է, որ հայ ազատագրական շարժման ղեկավարությունը զինված ուղղակի գործողություններին անցնելուց մի քանի ամիս առաջ է սկսել եռանդուն նախապատրաստություններ տեսնելը, ինչը տակտիկապես միանգամայն ճիշտ և բնական որոշում էր: Հիշենք, որ ազատամարտին նախապատրաստվելու նույն օրակարգով նույն 1722 թ. գարնանը՝ ապրիլից հունիս ընկած միջոցին, հատուկ ժողով էին գումարել նաև

⁴ **Armen M. Ayvazyan**, “The Secret Meeting of Armenians on Lim Island in 1722: Concerning the Possible Involvement of Western Armenians in an All-Armenian Liberation Movement),” in Janos M. Bak and Peter Banyo, eds., *Issues and Resources for the Study of Medieval Central and Eastern Europe: Reports and Articles* (Department of Medieval Studies, Central European University and the Committee on Centers and Regional Associations of the Medieval Academy of America: Budapest-Cambridge, MA, 2001); լույս է տեսել նաև՝ *Iran and the Caucasus*, vol. 5 (Tehran: International Publications of Iranian Studies, 2001), pp. 85-92.

Կապանի հայոց պարագլուխները: Ուրեմն՝ լիովին հավանական է, որ Կապանի ժողովին զուգընթաց համանման ժողովներ կազմակերպվեին նաև Հայաստանի այլ մասերում, այդ թվում Վասպուրականի խուլ անկյուն Լիմ անապատում:

Այսուհանդերձ, ցանկանում եմ շնորհակալություն հայտնել հարգարժան ընդդիմախոսին, որ նա նկատել է ատենախոսության մեջ սարդած մեր վրիպակը՝ իսկապես էջ 145-ում մենք սխալմամբ Ներսես վարդապետի ժամանումը Լիմ անապատ թվագրել ենք 1722 թ. օգոստոս-սեպտեմբերով, շփոթելով այն Դավիթ-բեկի Հայաստան մտնելու ժամանակի հետ ⁵ **[ԲԱՆԱՎՈՐ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ Է՝ «մինչդեռ մեր հողվածում ժամանակը ճիշտ է գրված, որ ժողովը տեղի է ունեցել զարմանք]:**

5. Մեր ընդդիմախոսը ժխտում է նաև Ներսես վարդապետի՝ 1722 թ. Լիմ անապատում կարդացած ճառի և Ղազար Ջահկեցու «Ողբ ի վերայ Հայաստան աշխարհին» չափածոյի մի հատվածում ունեցած բացառիկ նմանությունը, հեգնելով, թե իբր «ամենայն զաշխարհի Հայաստան» և «արիւնածուփ զաշխարհին Հայաստան» բառակապակցությունները այն ժամանակներում արտաբերելու ընդունակ էր առնվազն յուրաքանչյուր աբեղա, դա մի ինչ-որ արտառոց արտահայտություն չէ, որ նման հեռագնա եզրակացության տեղիք տա»: Նախ ճշտենք, որ մենք ցայտուն նմանություն ենք տեսել ո՛չ թե միայն այս բառակապակցությունների միջև, ինչպես փորձում է ներկայացնել ընդդիմախոսը, այլ նախ և առաջ դրանց բովանդակության միջև, նրանում, որ երկուսն էլ խոսում են **ամբողջ** Հայաստան աշխարհի ազատագրության մասին: 15 տարի շարունակ ուսումնասիրելով 1720-1730-ական թթ. սկզբնաղբյուրները, այդ թվում անտիպ հիշատակարանները՝ դեռևս չենք հանդիպել որևէ մեկ այլ հիշատակարան, որտեղ ամբողջ Հայաստանն ազատագրելու ուղղակի կոչ է արվում: Եթե պրն Դիլոյանը ունի նման օրինակներ, խնդրում ենք դրանք հրատարակել, իսկ մենք էլ ուրախությամբ կօգտագործենք այդ նյութերը: Սակայն 1720-ական թթ. ուսումնասիրող մասնագետների համար առհասարակ հայտնի փաստ է, որ հայոց

⁵ Տե՛ս Ա. Մ. Այվազյան, «Դավիթ-բեկի Հայաստան գալու ժամանակն ու հանգամանքները». - Պատմա-բանասիրական հանդես, 1990, No. 3 (130), էջ 76-85:

ազատամարտերի մասին այդ ժամանակաշրջանի հիշատակարաններում ոչինչ գրեթե գրանցված չէ: Հենց դրանում է Լիմ անապատի հիշատակարանի եզակիությունն ու արժեքը (ի դեպ, այս վավերագիրը բարձր գնահատելով, դեռևս 1941 թ. այն վերահրատարակել էր ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը):

6. Մեր ընդդիմախոսը գրում է. «չգիտես որտեղի՞ց է վերցված կամ ի՞նչ հիման վրա է արվում այն պնդումը, որ «ռուշտունեաց» երկրից Ներսես վարդապետը արևելահայ շրջանների կողմից ուղարկված է եղել «կոչ-դիմումով»»:

Կարևորն այստեղ այն է, որ մեր հարգարժան ընդդիմախոսը չի ցանկանում տարբերել, թե ո՞րտեղ ենք մենք «պնդում» անում, իսկ ո՞րտեղ ենթադրություն: Այդ ամբողջ ենթազուխը ենթադրություն է, այլապես մենք այն հարցական նշանով չէինք խորագրի (տե՛ս էջ 128՝ «Ղազար Ջահկեցին՝ 1722 թ. Լիմ անապատի գաղտնի ժողովում ընթերցված կոչի հեղինակ»): Սակայն ենթադրությունը ևս պետք է հերքել, այլ ոչ թե չնկատելու տալ:

Այժմ պատասխանենք բուն հարցին: Մենք պարզ մատնանշել ենք, որ «կոչ-դիմումի» առկայությունը ենթադրել ենք Մխիթար արքեպիսկոպոսի անսպասելիորեն ընդհատվող շարադրանքից, երբ նա հանկարծ սկսում է ուղիղ խոսքով վերաշարադրել Ներսես վարդապետի խոսքը: Քանի որ հիշատակարանը չի գրվել հենց նույն օրը, այլ շատ ավելի ուշ՝ հնարավոր է շաբաթներ և ամիսներ անց, ապա ուղիղ խոսքի մեջբերումը, ինչպես նշել ենք՝ «կարծես թե հուշում է» գրավոր փաստաթղթի առկայություն, «որից էլ հետագայում օգտվել է Մխիթար արքեպիսկոպոսը» (էջ 130): Միթե՞ «կարծես թե հուշում է» արտահայտությունը նման է «պնդում» անելուն:

Դժվար է նաև համաձայնվել 1722 թ. Ղազար Ջահկեցուն Մայր Աթոռում դեռևս չճանաչելու ընդդիմախոսի ենթադրության հետ: Ինչպես պարզել ենք, 1719 թ. դրությամբ Ղազարը եղել է ճահուկ գյուղաքաղաքի՝ Շողակաթ կոչված Ս. Աստվածածին վանքի միաբան, արդեն խորիմաց վարդապետ և ինքնուրույն աշխատությունների հեղինակ ու հազիվ թե մինչև 1722 թ. նա մի անհայտ ոք լիներ Ս. Էջմիածնում, որը մեծ հեռավորության վրա չէր գտնվում և սերտ կապի մեջ էր Շողակաթի հետ: Իսկ այն, որ Աստվածատուր կաթողիկոսը, կանչելով

Ղազար Ջահկեցուն իր մոտ, 1723 թ. կամ 1724-ի սկզբներին նրան եպիսկոպոս է ձեռնադրել (մի փաստ, որ ընդդիմախոսին հայտնի է մեր ատենախոսությունից)՝ որևէ կերպ չի ապացուցում, թե Ղազարին մինչ այդ Մայր Աթոռում չեն ճանաչել:

7. Այժմ, հնարավորին չափ սեղմ, ընդդիմախոսի մի ոչ-գիտական արտահայտության մասին: Փորձելով Ղազար Ջահկեցու վրա բարդել եղած և չեղած բազմաթիվ մեղքեր, ընդդիմախոսը մեզ մեղադրում է ոչ ավել, ոչ պակաս հանուն Ղազար Ջահկեցու փառաբանման՝ XVIII դարի հայ եկեղեցականության հասցեին «ուղղակի զրպարտություն» կատարելու մեջ:

Մասնագիտական խորհրդի անդամ, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն, պատ. գիտ. դոկտոր *Աշոտ Մելքոնյանը* դահլիճից ընդհատում է. «Այդ «մեղադրանք» բառը հանեք»:

Ա. Այվազյանն, ընդհատելով շարադրանքը, պատասխանում է Ա. Մելքոնյանին. «Բայց «զրպարտությունն» ի՞նչ է: [Գրված է, որ] ես կատարել եմ «ուղղակի զրպարտություն XVIII դարի հայ եկեղեցականության հասցեին»: Ղա մեղադրանք չէ, ի՞նչ է»:

Ա. Մելքոնյան. «Դիտողությունն ու մեղադրանքը նույն բանը չեն»:

Ա. Այվազյան. «Ես ասացի, որ սա ոչ-գիտական արտահայտություն է և սա մեղադրանք է»: Շարունակում է ընթերցել:

Սա մտացածին և անընդունելի մեղադրանք է, քանզի մեր ատենախոսությունն իր ամբողջ բովանդակությամբ և արդյունքներով ապացուցում է հակառակը, արժևորելով հայ հոգևորականության իրական դերակատարությունը հայ ժողովրդի համար ծանրագույն այդ ժամանակաշրջանում:

Բայց ի՞նչ հողի վրա է սարքված այս մեղադրանքը: Ընդամենը մի նախադասության, ուր ասված է, որ Հռոմի պապականության դեմ Ղազար Ջահկեցու ձեռնարկած «ծառացումն անհետևանք մնալ չէր կարող, այն էլ՝ Հայաստանի համար անկումային և ծանրագույն մի ժամանակաշրջանում, երբ

հայ եկեղեցական գործիչներից շատերը փորձում էին զիջումների գնով հաշտվել Ռոմի հետ, իսկ շատերն էլ՝ ուղղակի նետվում էին կաթոլիկության գիրկը» (էջ 138):

Իսկ միթե՞ այդպես չէ:

Միթե՞ Յովհաննես Կոլոտն ու Կարապետ Ուլնեցի կաթողիկոսը, ինչպես նաև նրանց գործընկեր և համամիտ բազմաթիվ հայ եկեղեցական գործիչներ զիջումների գնով չէին փորձում հաշտվել Ռոմի հետ: Այդ հարցը մանրամասն քննված է ատենախոսության Երրորդ և Չորրորդ գլուխներում:

Հիշեցնենք նաև Ղազար Ջահկեցու կաթողիկոսության շրջանում կաթոլիկների ձեռնարկած գրոհից ընդամենը մի քանի պերճախոս փաստ: Նրա կաթողիկոսանալու նախօրեին Անկյուրիայի կաթոլիկադավանները փայլուն հաղթանակ տարան՝ գրավեցին հայկական յոթ եկեղեցիներից չորսը (Անկյուրիայի շփոթները շարունակվեցին նաև Ղազարի գահակալման տարիներին)⁶: *[ԲԱՆԱՎՈՐ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ Է՝ «ի դեպ, Անկյուրիան՝ դա Անկարան է, որը ստվարածավալ հայ բնակչություն ուներ, իսկ այսօր՝ խնդրեն...»]*: 1740 թ. Աբրահամ Արծիվյան եպիսկոպոսը հռչակվեց Հայոց կաթոլիկ կաթողիկոս, երկու տարի անց էլ Ռոմում պապը կողմից ճանաչվեց ու հաստատվեց իբրև Հայոց Պետրոս Ա կաթողիկոս: Այդպիսով՝ հենց Ղազար Ջահկեցու կաթողիկոսության ժամանակ է դրվել Ռոմին ենթակա Հայ կաթոլիկ եկեղեցու հիմքը⁷: Միթե՞ սա էլ մի նոր ու մեծ վտանգավոր երևույթ չէր և արդյո՞ք այն ժամանակակիցները չպետք է դիտեին իբրև հնարավոր բեկումնակետ Հայ առաքելական եկեղեցու դիրքերի հետագա թուլացման գործում:

Հենց Ղազար Ջահկեցու կենսագործունեության շրջանում կաթոլիկության գրոհն որդեգրեց նոր, առավել արդյունավետ միջոցներ⁸: Այդ շրջանում էր, որ կաթոլիկ քարոզչությունն սկսեց իր նպատակների համար օգտագործել նոր-նոր ձևավորված մխիթարյան և անտոնյան միաբանությունների անդամներին, ինչը հանգամանորեն քննադատում է նաև Մ. Օրմանյանը, նշելով, որ Անկյուրիայում և այլուր կաթոլիկների ունեցած

⁶ Տե՛ս Մ. Չամչեանց, *Պատմութիւն Հայոց*. Զ. Գ, Վենետիկ, 1786, էջ 814, «Ազգապատում», §§1988, 2001, 2004:

⁷ «Ազգապատում», §2009, 2013:

⁸ «Ազգապատում», §1995, 2001-2004, 2009-2011, 2013-2016, 2033:

«հաջողության պատճառները պիտի տեսնենք նախ այն հաշտարար ընթացքին մեջ, որուն կիեւտներ Կոլոտ, անուղղակի ասպարեզ թողնելով սպրդող քարոզիչներուն, և երկրորդ՝ այն ձևին մեջ, զոր որդեգրած էին Մխիթարյան և Անտոնյան միաբանները, դյուրամատույց ընծայելով հռոմեականության ընդունելությունը»⁹: Բանը հասել էր նրան, որ Վենետիկում էր հաստատվել Ս. Էջմիածնի նախկին աթոռակալ Մինաս արքեպիսկոպոս Փերվազյանը, Հռոմում դեգերումների մեջ էր կաթոլիկություն ընդունած սյունյաց ազատամարտի հերոս-զորահրամանատարներից մեկը՝ Տեր-Ավետիս քահանան: Ստեղծված իրավիճակն արտացոլվել է նաև Մաղաքիա Օրմանյանի «Ազգապատում»-ում, ուր Ղազար Ջահկեցու ժամանակաշրջանում կատարված իրադարձություններին նվիրված 43 գլխից 15-ը (!) արծարծում են զուտ կաթոլիկության հաղթարշավի առաջ բերած խնդիրները¹⁰:

Այո՛, ասել ենք և նորից ենք կրկնում. կաթոլիկության հանդեպ կարծր քաղաքականություն որդեգրելով, Ղազար Ջահկեցին վաստակել էր բազմաթիվ ազդեցիկ հակառակորդներ, որոնցից էին Կ. Պոլսի Հովհաննես Կոլոտ և Գրիգոր Նալյան պատրիարքները, Երուսաղեմի Գրիգոր Շղթայակիր պատրիարքը, մխիթարյան և անտոնյան միաբանությունները, վերջապես՝ Հռոմեական Հավատասփյուռը՝ իր միսիոներական ցանցի ամենուրեք հասնող շոշափուկներով:

8. Մեր հետազոտության նպատակների համար անհրաժեշտ չի եղել գրելու Ղազար Ջահկեցու ողջ կենսագործունեությանը նվիրված մի աշխատություն: Ատենախոսության մեջ մեր խնդիրը եղել է Ղազար Ջահկեցու հասարակական-քաղաքական գործունեության արծարծումը, առավելաբար նրա աշխատություններում առկա գաղափարախոսական դրույթների վերծանումն ու վերլուծությունը **[ԲԱՆԱԿՈՐ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ Է՝ «որպես հայ եկեղեցական գաղափարախոսություն, այլ ոչ թե որպես հենց միայն Ղազար Ջահկեցու գաղափարախոսություն]**: Ուստի բավական զարմանալի է, որ մեզանից պահանջվում է, որպեսզի մենք վերլուծեինք նաև նրա կյանքի և

⁹ Տե՛ս «Ազգապատում», §1988: Առավել մանրամասն մխիթարյանները քննադատված են §1988-ում:

¹⁰ Տե՛ս «Ազգապատում», §1991-2034:

վարչարարության բոլոր դրվագները, ինչն այդ դեպքում առանձին հատոր կկազմեր:

Այժմ կանդիդատնաք Ղազար Ջահկեցուն պրոֆ. Դիլոյանի ներկայացրած մեղադրանքներից մի քանիսին: Մեր ընդդիմախոսը մեղադրում է Ղազար Ջահկեցուն Հովհաննես Կոլոտին վարկաբեկելու մեջ: Սակայն Երրորդ գլխում, մանրամասն հետազոտությունից հետո, ցույց ենք տվել, որ Կոլոտ պատրիարքի մասին բացասական կարծիքը տարածված էր արևելահայ կղերի մեջ առհասարակ ու ամենևին Ղազար Ջահկեցու մենաշնորհը չէր: Նույն Սիմեոն Երևանցի կաթողիկոսը, որին իրավամբ այդքան բարձր է գնահատում մեր հարգարժան ընդդիմախոսը, ահա այսպես էր խոսում Կոլոտ պատրիարքի մասին.

«Իսկ այն Յովհաննես վարդապետն Բաղիշեցի... խորամանկ, շոքմոգ, կեղծաւոր եւ խաբող, որպէս բերքն է Բաղիշու եւ այնց կողմանց...» (*Ջամբռ*, էջ 235-236):

[ԲԱՆԱՎՈՐ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ Է՝ «ուրեմն ի՞նչ. ստացվում է, որ Սիմեոն Երևանցին է՞լ էր վարկաբեկում Կոլոտ պատրիարքին]:

Սիմեոն Երևանցու այս կարծիքը մեջբերված է մեր ատենախոսության 40-րդ էջում: Մանրամասն քննել ենք նաև այդ կարծիքի առաջացման պատճառները: Տպավորությունն այնպիսին է, կարծես մեր Երրորդ գլուխն ընդդիմախոսն ընդհանրապես չի կարդացել:

Իսկ միթե՞ ճիշտ չէ, որ Կարինում լատինամիտները Ղազար Ջահկեցու դեմ թակարդ էին լարել անմիջապես նրա կաթողիկոս ընտրվելուց հետո, դեռ Ս. Էջմիածնի ճանապարհին նրա գտնված ժամանակ¹¹: Ահա այսպիսի թշնամական գործողություններից հետո է, որ, պարբերաբար ներքաշվելով ծուղակների մեջ և հատնվելով ծանր վիճակներում, Ղազար Ջահկեցին, բնականաբար, ջղածգվում էր և իրոք սխալներ թույլ տալիս: Այս մասին է մեր խոսքն ու մնում է անհասկանալի, թե որտեղի՞ց է ընդդիմախոսը պեղել հայ եկեղեցականներին «գրպարտելու» թեզը: Ինչու՞ է ընդդիմախոսը լռում և շրջանցում Ղազար Ջահկեցուն բարձր գնահատող աղբյուրները, մասնավորապես, Հովհաննես վարդապետ Ամասիացու՝ 1756 թ. Ամստերդամում գրած չափածո մի ամբողջ երկը, որն առաջին անգամ հրապարակվել է այս

¹¹ **Չամչեանց**, *Պատմութիւն Հայոց*. Զ. Գ., , 1786, էջ 819, «Ազգապատում», §1992:

ատենախոսության մեջ **[ԲԱՆԱՎՈՐ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ Է՝ «և որն ամբողջությամբ նվիրված է Ղազար Ջահկեցու կենսագործունեությանը»]**: Մեր ընդդիմախոսը սխալվում է, կարծելով, թե Ղազար Ջահկեցին վերջնականապես վարկաբեկված է եղել Էջմիածնի միաբանության միջավայրում: Ամենահին: Դրանում համոզվելու համար կարելի է այցելել թեկուզ Ս. Գայանեի վանքը **[ԲԱՆԱՎՈՐ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ Է՝ «ես այցելել եմ»]** և կարդալ Ղազար կաթողիկոսի տապանաքարին գրված տողերը, ուր նա բնորոշվում է որպես «այր հրաշալի» և «մեծ գիտնական»: Ի դեպ, իրեն անմիջականորեն նախորդած կաթողիկոսներից և ո՛չ մեկի տապանաքարը «մեծ գիտնական» գնահատականը չունի:

Հաջորդ կարևոր մեղադրանքը վերաբերում է Ղազար Ջահկեցու ընչասիրությանը: **[ԲԱՆԱՎՈՐ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ Է՝ «Սա հայտնի մեղադրանք է, որ վերցված է Չամչյանի երկից, իսկ Չամչյանը վերցրել է մխիթարյանների հաղորդումներից, մխիթարյաններն էլ Ղազար Ջահկեցու համար Ա թշնամին էին]:** Մարդկային այդ արատը որոշակի նպատակներ ունի, հատկապես բազմազան վայելքների ճաշակում ու ժառանգների նյութական ապահովագրում: Ղազար կաթողիկոսը ո՛չ ժառանգ ուներ, ո՛չ սիրուհիներ, ո՛չ էլ արտասահմանյան վիլլաներում իր հանգիստը հաճախակի անցկացնելու հնարավորություն: Նա ապրում և գործում էր տասնամյա պատերազմներից հետևանքով ավերված մի երկրում՝ օտար բռնապետության ենթակայության տակ (հիշեցնենք, որ 1724 թ. Երևանում կոտորվեց 30 հազար հայություն և տասնյակ հազարներն էլ Արարատյան աշխարհից գերեվարվեցին Եգիպտոս, Պոլիս և այլուր):

Իսկ այժմ խնդրում են պատասխանել հետևյալ հարցին՝ այդ ծանրագույն պայմաններում Ղազար Ջահկեցին կարողացավ կառուցել Էջմիածնում այն ժամանակների հասկացությամբ երկու հոյակերտ շինություն՝ վեհարանը ու նաև մի հյուրանոց՝ Ղազարապատը, որոնք մինչև 20-րդ դար ծառայեցին Մայր Աթոռի պետքերին: Ինչպե՞ս և ի՞նչ միջոցներով: Ի՞նչ հիմա պատասխանենք հետևյալ հարցին՝ ինչու՞ այդպիսի խոշոր շինություններ Էջմիածնում չկառուցվեցին ավելի վաղ՝ նախապատերազմյան շրջանում, ասենք՝ Եղիազար Այնթապցի, Նահապետ Եդեսացի, Աղեքսանդր Ջուղայեցի կամ Աստվածատուր Համադանցի կաթողիկոսների օրոք, այն ժամանակ, երբ երկրի տնտեսությունն անհամեմատ ավելի բարվոք վիճակում էր: Պատասխանը միակն է. Ղազար

Ջահկեցին նյութական միջոցները կուտակել է ոչ թե անձամբ իր համար, այլ, նախ և առաջ, Մայր Աթոռի պետքերը հոգալու համար: Հետևաբար, բացի փայլուն գաղափարախոս լինելուց, նա ունեցել է նաև վարչարարական մեծ ձիրք, իսկ նրա ընչասիրությունը՝ թշնամիների հորինած հերթական հեքիաթներից է:

Ի դեպ, Օրմանյանը, թեև ընկել է Չամչյանի հաղորդած տվյալների ազդեցության տակ և խստագույնս քննադատել է Ղազար կաթողիկոսին («Ազգապատում»-ում նրա կենսագործունեության վերջին հատվածն շարադրված է *բացառապես* Չամչյանի տեղեկությունների հիման վրա¹²), այնուամենայնիվ՝ բարձր է գնահատել նաև Ջահկեցու դրական կողմերը, գրելով՝ «բոլոր կյանքին ընթացքին մեջ հայտնի կտեսնվին անոր վրա կարողության գովելի ձիրքեր, հաջողակության համար արթուն միտք, և ձեռնարկներու մեջ տոկուն ջանք»¹³: Իսկ թե որքանով են ստույգ Չամչյանի տեղեկությունները, որոնք ստացվել են Ղազար Ջահկեցու հետ վաղուց ի վեր թշնամացած մխիթարյաններից, ու որքանով են դրանք հակասում տեղական աղբյուրներին, կարելի է դատել թեկուզ մեկ հետևյալ օրինակով: Չամչյանի աղբյուրը փորձում է Պետրոս Քյութուրի մահին անուղղակիորեն բարդել Ղազար Ջահկեցու վրա, ասելով, թե Քյութուրն իբր մահացել է կաթողիկոսի եղբոր ընտանիքի՝ Ջահուկուն նրան սովի մատնած լինելու հետևանքով: Մինչդեռ տեղական անկողնմակալ աղբյուրն ասում է, որ Քյութուրն արգելված է եղել մի վանքի մեջ, որտեղ նրան սպանել են վանքը կողոպտելու եկած ավազակները¹⁴: *[ԲԱՆԱՎՈՐ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ Է՝ «Տեսե՛ք, թե որքան հեռավոր են այս տեղեկություններն իրարից, երկու բոլորովին տարբեր տեղեկություն: Ինչու՞ մենք պետք է վստահենք Չամչյանի տեղեկությանը և ոչ թե տեղական աղբյուրի՞ն, իմանալով, որ Չամչյանի տեղեկությունները վերցված են մխիթարյանների դիվանից]:*

Եվ վերջում ամենակարևորի մասին: Ընդդիմախոսն իսպառ անտեսում է այն փաստը, որ Ղազար Ջահկեցու կաթողիկոսության օրոք Մայր Աթոռի ներսում տեղի ունեցած խժոժությունները անընդհատ հրահրել են մերթ պարսկական, մերթ օսմանյան պետությունների բարձր դիրքեր զբաղեցնող պաշտոնյաները, ունենալով և՛ քաղաքական, և՛ շահադիտական

¹² Տե՛ս «Ազգապատում», §2022-2028:

¹³ Տե՛ս «Ազգապատում», §2034:

¹⁴ Տե՛ս «Ազգապատում», §2028:

նկատառումներ: [ԲԱՆԱՎՈՐ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ Է՝ «Չի կարելի ամեն ինչը բարդել միայն մեկ մարդու վրա:]

9. Այժմ «մասնակի վրիպումների» մասին:

ա) Պրոֆ. Դիլոյանը ճիշտ է նկատել, որ Մինաս Տիգրանյանը, մերժելով թարգմանել պարսկերենով գրված փաստաթուղթը, «*íêêîîó ïàððèêóëÿðíî ÷íàðü íâ ïîäèâæèð*» ասելով, նկատի չի ունեցել բոլորին, ինչպես մենք ենք թարգմանել: Սակայն *íàððèêóëÿðíî* բառի իր առաջարկած թարգմանությունը՝ «մասնավոր» անձանց այս դեպքում տեղին չէ, որովհետև Մինաս Տիգրանյանին այցելել էին ոչ թե մասնավոր մարդիկ, այլ ռուս չինովնիկներ: Այդ իրադրության մեջ «*íêêîîó ïàððèêóëÿðíî*» բառակապակցությունը ճիշտ կլինի թարգմանել որպես «գործին անհրազեկ մարդկանց»:

բ) Ընդդիմախոսը գրում է, թե մենք իբր հրատարակել ենք «Ս. Էջմիածնի «նուիրակութեան վիճակներ» (1765 թ.) փաստաթուղթը Գյուտ Աղանյանցի «Դիւան հայոց պատմության» մատենաշարի Գ. հատորից, սակայն աղբյուրը նշել ենք միայն ծանոթագրության մեջ: Այս դիտողության մեջ կա երկու սխալ.

- 1) մենք հստակ նշել ենք, որ այդ փաստաթուղթը, ինչպես և մեկ այլ անտիպ փաստաթուղթ քաղել ենք, վերծանել ու հրապարակել Մաշտոցի անվ. Մատենադարանի համար 9120 ձեռագրի միջից, էջ 1ա-5բ-ից (էջ 234-235),
- 2) մենք հստակ նշել ենք, որ առաջին անգամ այդ փաստաթուղթը հրատարակել է Գյուտ Աղանյանցը:

Տարօրինակ է, որ հարգարժան ընդդիմախոսը չի նկատել ատենախոսության...

Վ. Դիլոյանը դահլիճից ընդհատում է, բացականչելով. «Հստակ չե՞ք նշել»:

Ա. Այվազյան, կանգ առնելով, պատասխանում է. «Հիմա կարդում եմ հե՛նց այդ հատվածը: Տեսնե՛նք՝ հստակ է թե՞ հստակ չէ: Ուրեմն, անմիջապես այդ փաստաթղթի հրապարակումից...»

Վ. Դիլոյանը ոտքի է կանգնում ծայրաստիճան բորբոքված վիճակում և նորից ընդհատում. «Ես 16-րդ ծանոթագրության մասին խոսեցի՝ ասեցի, որ

ասում եք, բայց արդեն այդտեղ տալիս եք անպետք նյութեր և այլն: Դա ճիշտ չէ»:

Ա. Այվազյանը պատասխանում է. «Մի՛ րոպե, պարո՛ն Դիլոյան, թույլ տվեք, կարելի՞ է: Ուրեմն, այդ փաստաթուղթը հրապարակված է սկսած [ատենախոսության] 234 էջից: Անմիջապես այդ փաստաթղթի հրապարակումից 2 սանտիմետր վերև գրված է հետևյալ նախադասությունը, որը դուք չեք նկատել (ոչ թե ծանոթագրության մեջ, այլ հենց տեքստի մեջ): Թույլ տվեք կարդամ»: **Շարունակում է ընթերցել պատասխանը:**

...հարգարժան ընդդիմախոսը չի նկատել ատենախոսության 234 էջում արված հետևյալ ծանուցումը (մեջբերում եմ). ««նուիրակական վիճակների» սահմանները ճշտող [այս] վավերագիր[ը]... առաջին անգամ հրատարակել է Գյուտ Աղանյանցը, բայց ցայժմ անհայտ էր մնում, թե նա ո՞ր մատյանից էր քաղել այս վավերագիրը: Բավական բարդ ընթեռնելի այս փաստաթղթի վերահրատարակությունը կատարում ենք մեր մանրագնին ընթերցման համաձայն»: Իսկ համար 16 ծանոթագրության մեջ գրել ենք բառացիորեն հետևյալը **[ԲԱՆԱՎՈՐ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ Է՝ «Ուրիշ բան է գրված այնտեղ]**. «Շնորհակալություն ենք հայտնում պատմաբան Գեղամ Բադալյանին՝ մատնացույց անելու համար ձեռագրից մեր քաղած այս փաստաթղթի և Գ. Աղանյանցի հրատարակածի նույնությունը, ինչպես նաև տեղանունների ցանկում բազմաթիվ ճշտումներ կատարելու համար»: Գեղամ Բադալյանը կարծեմ այստեղ նստած է և կարող է հավաստել, թե նա ինչպես է օգնել ինձ վերծանելու ձեռագրի միջից իմ արտագրած բազմաթիվ տեղանունները և համեմատելու դրանք Աղանյանցի հրապարակման հետ:

Ավարտելով, ցանկանում եմ նորից խորին շնորհակալություն հայտնել մեր հարգարժան ընդդիմախոսին ատենախոսությունը մանրամասնորեն զննելու և բազմաթիվ օգտաշատ պահեր մեջտեղ բերելու համար:

Շնորհակալություն»:

Վ. Բարխուդարյանը դիմում է ընդդիմախոսին. «Պարո՛ն Դիլոյան, ասելիք ունե՞ք»:

Վ. Դիլոյանը ոտքի է կանգնում. «Ես իսկապես բավականաչափ ասելիք ունեմ, ուզում եմ ասել մի հարցի կապակցությամբ»: Նա մոտենում է ամբիոնին և ասում. «Սիմեոն Երևանցու հրամանները ... (2-3 անվերծանելի բառ)... ուրեմն, Հովհաննես Կոլոտ պատրիարքը դառնում է «շոքմոգ» և այլն, և այլն: Մի՛ թույլ... Բայց Սիմեոն Երևանցին ի՞նչ հանգամանքներում էր գրում այդ հարցերի մասին և ի՞նչ նպատակներ էր նա հետապնդում: Սրա՛ մասին պետք է խոսել և ոչ թե անել եզրակացություններ, որոնք իրականությանը չեն համապատասխանում: Մի՛ թույլ... Հիմա՛... Սիմեոն Երևանցին, ինչպես հայտնի է, կաթողիկոսանալուց հետո իր առաջին նպատակներից մեկը դարձրեց, որպեսզի, փաստորեն, ոչնչի վերածի Կ. Պոլսի Հայոց պատրիարքությունը և դրա փոխարեն նշանակի կաթողիկոսական պատվիրակներ, ներկայացուցիչներ: Եվ դրա համար էլ, Սիմեոն Երևանցին ինչ-որ գրում է, ինչ-որ առնչվում է այդ հարցերին, Կոլոտին, պատվում է դրա շուրջը, որովհետև նա ուզում էր Էջմիածնի վարկը բարձրացնել և Կ. Պոլսի պատրիարքությունը վերածել ոչնչի: Սա՛ է ամբողջ հարցը: Այնպես որ, երբ մոտենում եք, թե ինչու՞ է Սիմեոն Երևանցին այսպես ասել, իմացե՛ք, թե ինչու՛: Եվ ոչ թե...»:

Ա. Այվազյանը փորձում է պատասխանել. «Այդ հարցը ես մանրամասն քննել եմ, մի ամբողջ գլուխ եմ նվիրել...»:

Վ. Դիլոյանն ընդհատում է և անցնում այլ հարցի. «Դուք ասում եք, թե Ղազար Ջահկեցու մասին Հովհաննես Ամասիացու գրածը չեն նայել¹⁵, բայց հաշտվելու փաստը նրանից եմ վերցրել: Այնպես, որ չի կարելի այստեղ հայտարարություններով հանդես գալ և ասել, թե սա այսպես է: Ես այդ բոլորը շատ լավ նայել եմ, գիտեմ: Այնպես, որ հարկավոր է, երբ որ խոսում եք, թե այդ բանը... թե ե՛ս ինչ ի նկատի ունեմ, և դու՛ք ինչ ի նկատի ունեք: Ես կրկնում եմ, որ Ղազար Ջահկեցին անհարկի բարձրացված է: Անհարկի՛: Ես գիտեմ, որ նա Վեհարան է կառուցել՝ իրեն համար, և գիտեմ, որ Ղազարապատի հյուրանոցն է կառուցել: Բայց դրանք նրա մնացած մեղքերը քավու՞մ եմ»:

Ա. Այվազյանը, մոտենալով ամբիոնին, ասում է. «Եկեք ուղղակի ավելի հանգիստ բանավիճենք: Ինչ վերաբերում է Ամասիացու աղբյուրին. այդ

¹⁵ Այդպիսի բան ատենախոսը չի ասել: Նա ասել է Հովհաննես Ամասիացուն միտումնավոր «շրջանցելու» մասին միայն:

աղբյուրն առաջին անգամ հրատարակել և վերլուծել ենք մենք, և ցույց ենք տվել, թե երբ է հաշտվել Կոլոտի հետ Ղազար Ջահկեցին: Ուրեմն, դուք վերցրել եք դա ո՛չ թե Ամասիացու երկից, այլ իմ ատենախոսության միջից. իմ վերլուծությունում է ճշտված, թե ե՞րբ, որտե՞ղ, ինչպե՞ս նրանք հաշտվեցին: Իսկ այդ հաշտեցումը խորքային չէր, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, այլ այն առերեսային էր, որպեսզի չգրգռվեն հայկական զանգվածների զգացմունքները: Հետագայում Ղազար Ջահկեցին Ջմյուռնիայում տերունական վիճակի նվիրակն էր, որը ենթակա չէր բոլորովին Կոլոտ պատրիարքին, այլ անմիջականորեն ենթակա էր Ս. Էջմիածնին և շատ քիչ առնչություններ ուներ Կոլոտի հետ: Այսքանը»: